ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/236

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.10.2020թ. թիվ 26/26/16355-2020 գրությամբ «Ագրոատոմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը Երևանի քաղաքապետարանի 21.10.2020թ. թիվ 01/61-21080 գրության հիման վրա 30.10.2020թ. թիվ 26/26-1/16355-2020 գրությամբ նախաձեռնել է «Ագրոատոմ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ագրոատոմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ագրոատոմ» ՍՊԸ-ն 16.11.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում «Ագրոատոմ» ՍՊԸ-ին (պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան, ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/129 ծածկագրով ընթացակարգ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2020/236 ընթացակարգը:

Նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնում եմ հետևյալ առարկությունը և գտնում եմ, որ այն ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/129 ծածկագրով գնման ընթացակարգը:

«Ագրոատոմ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված թիվ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/12 ծածկագրով գնման ընթացակարգին:

Գնահատող հանձնաժողովի 22.09.2020թ-ի N 3 արձանագրությամբ «Ագրոատոմ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշվել է պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Ագրոատոմ» ՍՊԸ-ին:

28.09.2020թ-ից ՀՀ-ում հայտարարվել է ռազմական դրություն:
Ռազմական դրության պայմաններում զորակոչվել և առաջնագիծ են մեկնել «Ագրոատոմ» ՍՊԸ-ի որոշ աշխատակիցներ, հայտարարված զորակոչի հետևանքով անհնար է դարձել նոր աշխատողների ներգրավումը:

Առկա պայմաններում Ընկերության բնականոն գործունեությունը խաթարվել է և անհնար է դարձել արդեն իսկ առկա պայմանագրերի կատարումը:

09.10.2020թ-ին «Ագրոատոմ» ՍՊԸ-ն ստեղծված իրավիճակի մասին գրավոր տեղեկացրել է գնահատող հանձնաժողովին և հրաժարվել է պայմանագրի կնքելուց:

15.10.2020թ-ին գնահատող հանձնաժողովի N 4 արձանագրությամբ «Ագրոատոմ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

21.10.2020թ-ին Երևանի քաղաքապետը N 01/61-21080 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարին՝ խնդրելով նախաձեռնել «Ագրոատոմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին գործընթաց:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 30.10.2020թ. թիվ 26/26-1/16355-2020 գրությամբ նախաձեռնել է «Ագրոատոմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

«Ագրոատոմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը հարուցվել է Կարգի խախտմամբ:

Այսպես՝ մասնավորապես՝ Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Ագրոատոմ» ՍՊԸ-ն դեռևս 09.10.2020թ-ին հրաժարվել է պայմանագրի կնքումից, իսկ պատվիրատուն միայն 21.10.2020թ-ին է համապատասխան գրությամբ դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն, վերջինս էլ, անուշադրության մատնելով պատվիրատի կողմից ժամկետի բացթողումը, իր հերթին կրկին ժամկետի բացթողմամբ է նախաձեռնել ընթացակարգը:

Գործադիրի կողմից կոնկրետ գործողությունների կատարման համար ժամկետների ամրագրումն ինքնանպատակ չէ, հետևաբար այն կիրառող մարմինները պետք է պահպանեն այն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում եմ մերժել «Ագրոատոմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառել»:

Ի լրումն վերոնշյալ գրության Ընկերությունը 25.11.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Ագրոատոմ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված թիվ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/12 ծածկագրով ընթացակարգին:

Գնահատող հանձնաժողովի 22.09.2020թ-ի N 3 արձանագրությամբ «Ագրոատոմ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշվել է պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Ագրոատոմ» ՍՊԸ-ին:

28.09.2020թ-ից ՀՀ-ում հայտարարվել է ռազմական դրություն:

Ռազմական դրության պայմաններում զորակոչվել և առաջնագիծ են մեկնել «Ագրոատոմ» ՍՊԸ-ի որոշ աշխատակիցներ, հայտարարված զորակոչի հետևանքով անհնար է դարձել նոր աշխատողների ներգրավումը:

Առկա պայմաններում Ընկերության բնականոն գործունեությունը խախթարվել է և անհնար է դարձել արդեն իսկ առկա պայմանագերի կատարումը:

Ոլորտը կարգավորող օրենսդրության համաձայն «Ագրոատոմ» ՍՊԸ-ն պարտավոր է ներկայացնել նաև պայմանագրի և որակավորման ապահովում, ինչ կազմում է կնքվելիք պայմանագրի 110 %-ը:

Նախքան ՀՀ-ում ռազմական դրություն հայտարարվելը «Ագրոատոմ» ՍՊԸ-ն բանավոր պայմանավորավծություն էր ձեռք բերել բանկային երաշխիք ստանալու և այն գնման ընթացակարգում ներկայացնելու համար:

Ռազմական դրության հայտարարումից հետո բանկը հրաժարվում է երաշխիքի տրամադրումը՝ պատճառաբանելով պատերազմի վտանգը:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ «Ագրոատոմ» ՍՊԸ-ն չի կարող կնքել պայմանագիրը, քանի որ ստեղծված իրավիճակի արդյունքում, իր կամքից անկախ, մի դեպքում չի կարողանում ապահովել բանկային երաշխիքը, իսկ մյուս դեպքում չունի համապատասխան աշխատուժ:

Խնդրում եմ Ձեզ «Ագրոատոմ» ՍՊԸ-ի կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու հանգամանքը դիտարկել հարգելի և Ընկերության նկատմամբ չկիրառել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բացասական հետևանքներ»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/236 ընթացակարգի շրջանակներում 09.11.2020թ. ժամը 10:20-ին և 30.11.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.10.2020թ. թիվ 01/61-21080 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/129 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ընտրված մասնակից է ճանաչվել «Ագրոատոմ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը 09.10.2020 թվականին գնահատող հանձնաժողովին հասցեագրված իր

դիմումի համաձայն՝ հրաժարվել է պայմանագիր կնքելուց: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Վերոգրյալով պայմանավորված և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով՝ առաջարկում եմ Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/236 ընթացակարգի շրջանակներում 09.11.2020թ. ժամը 10:20-ին և 30.11.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/236 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/236 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/129 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ագրոատոմ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.09.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել «Ագրոատոմ» ՍՊԸ-ն, այնուհետև որոշվել է, հիմք ընդունելով Օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները, վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.10.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, այն հիմնավորմամբ, որ «Ագրոատոմ» ՍՊԸ-ն 09.10.2020 թվականին գնահատող հանձնաժողովին հասցեագրված իր դիմումի համաձայն՝ հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.10.2020թ. թիվ 26/26/16355-2020

գրությունը, Երևանի քաղաքապետարանի 21.10.2020թ. թիվ 01/61-21080 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Ագրոատոմ» ՍՊԸ-ի 16.11.2020թ. և 25.11.2020թ. գրությունները՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ <u>10 աշխատանքային օրվա ընթացքում</u>, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությամբ սահմանվում է, որ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Ընդ որում շինարարական ծրագրերի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում սույն պարբերությամբ նախատեսված ապահովման չափը հավասար է շինարարական աշխատանքների գնման համար սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված արժեքի տասը տոկոսին:

Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/129 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ագրոատոմ» ՍՊԸ-ն:

«Ագրոատոմ» ՍՊԸ-ն ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/129 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացրել է 16.09.2020թ. թիվ G13133 բանկային երաշխիքը՝ 1.350.000 ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.09.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել «Ագրոատոմ» ՍՊԸ-ն, այնուհետև որոշվել է, հիմք ընդունելով Օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները, վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.10.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, այն հիմնավորմամբ, որ «Ագրոատոմ» ՍՊԸ-ն 09.10.2020 թվականին գնահատող հանձնաժողովին հասցեագրված իր դիմումի համաձայն՝ հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ընկերությունը 09.10.2020թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է հետևալը.

«28.09.2020թ-ից ՀՀ-ում հայտարարվել է ռազմական դրություն:

Ռազմական դրության պայմաններում զորակոչվել և առաջնագիծ են մեկնել «Ագրոատոմ» ՍՊԸ-ի որոշ աշխատակիցներ, հայտարարված զորակոչի հետևանքով անհնար է դարձել նոր աշխատողների ներգրավումը:

Առկա պայմաններում Ընկերության բնականոն գործունեությունը խաթարվել է և անհնար է դարձել արդեն իսկ առկա պայմանագերի կատարումը:

Ոլորտը կարգավորող օրենսդրության համաձայն «Ագրոատոմ» ՍՊԸ-ն պարտավոր է ներկայացնել նաև պայմանագրի և որակավորման ապահովում, ինչ կազմում է կնքվելիք պայմանագրի 110 %-ը:

Նախքան ՀՀ-ում ռազմական դրություն հայտարարվելը «Ագրոատոմ» ՍՊԸ-ն բանավոր պայմանավորավծություն էր ձեռք բերել բանկային երաշխիք ստանալու և այն գնման ընթացակարգում ներկայացնելու համար:

Ռազմական դրության հայտարարումից հետո բանկը հրաժարվում է երաշխիքի տրամադրումը՝ պատճառաբանելով պատերազմի վտանգը:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ «Ագրոատոմ» ՍՊԸ-ն չի կարող կնքել պայմանագիրը, քանի որ ստեղծված իրավիճակի արդյունքում, իր կամքից անկախ, մի դեպքում չի կարողանում ապահովել բանկային երաշխիքը, իսկ մյուս դեպքում չունի համապատասխան աշխատուժ:

Խնդրում եմ Ձեզ «Ագրոատոմ» ՍՊԸ-ի կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու հանգամանքը դիտարկել հարգելի և Ընկերության նկատմամբ չկիրառել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բացասական հետևանքներ»:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Ընկերությունը ՍՑ-ՆԳ-2020/236 ընթացակարգի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված գրությամբ պնդել է 09.10.2020թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ ներկայացված դիրքորոշումը, որտեղ մասնավորապես նշվում է, որ ռազմական դրության պայմաններում զորակոչվել և առաջնագիծ են մեկնել «Ագրոատոմ» ՍՊԸ-ի որոշ աշխատակիցներ: Հայտարարված զորակոչի հետևանքով անհնար է դարձել նոր աշխատողների ներգրավումը և առկա պայմանագրերի կատարումը, ինչպես նաև ռազմական դրության հայտարարումից հետո բանկը հրաժարվում է երաշխիքի տրամադրումը՝ պատճառաբանելով պատերազմի վտանգը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ **10 աշխատանքային օրվա ընթացքում*, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից***: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Մինչդեռ հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբեր 27-ի թիվ 1586-Ն որոշումը, միաժամանակ հաշվի առնելով ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/129 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Ընկերության դրսևորած վարքագիծը, այն է՝ մինչ ռազմական դրություն հայտարարելն Ընթացակարգի շրջանակներում Ընկերությունը հայտով որպես հայտի ապահովում ներկայացրել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի կողմից տրված 16.09.2020թ. թիվ G13133 բանկային երաշխիքը՝ 1.350.000 ՀՀ դրամի չափով, իսկ արդեն սեպտեմբեր 27-ին՝ ռազմական դրություն հայտարարվելուց հետո, երկրում ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ մի դեպքում չկարողանալով ապահովել բանկային երաշխիքը, իսկ մյուս դեպքում չունենալով համապատասխան աշխատուժ՝ վերջինս 09.10.2020 թվականին օբյեկտիվորեն զրկված է եղել Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում պայմանագիրը, ինչպես նաև որակավորման և պայմանագրի

ապահովումները Պատվիրատուին ներկայացնելու հնարավորությունից, ուստի նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Ագրոատոմ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելու փաստը, հետևաբար գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.10.2020թ. թիվ 26/26/16355-2020 գրությամբ «Ագրոատոմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**